ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՆԱՆԿԱՑՄԱՆ ԻՐԱՎԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սնանկացման կանխարգելմանն ուղղված գործընթացները ՀՀ դատական համակարգի և տնտեսական ինստիտուտների կայացման կարևոր երաշխիքն են: Ուսումնասիրելով կազմակերպությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի ծավալները՝ անհրաժեշտություն է առաջանում մշակելու ՀՀ կազմակերպությունների սնանկացման կանխարգելման նոր մոտեցումներ սահմանադրականության համատեքստում: Ներկայացված է նաև ՀՀ արտաքին պարտքի և պարտավորությունների խնդրահարույց ազդեցությունը կազմակերպությունների անվճարունակության, հետագայում նաև սնանկացման գործընթացի վրա:

Հիմնաբառեր. *կազմակերպությունների պարտավորություններ, ժամկետանց պարտք, ՀՀ դատական համակարգ, սահմանադրականություն, իրավական անվտանգություն*

JEL: K0, K00, K35

Սնանկացման տնտեսաիրավական կարգավորումը, օրենսդրականից բացի, երկրի տնտեսական և քաղաքական կյանքին սերտորեն առնչվող հիմնախնդիր է: Դա ենթադրում է պատկան ինստիտուտների գործունեության պատշաճ իրականացում, որը կնպաստի պետության կայացմանը և սահմանադրական նորմերի ամրապնդմանը: Եթե բարեփոխումների հարցում դան-

դաղկոտություն դրսևորվի ու չկանխարգելվեն քաղաքական, սոցիալ-տնտեսական ճգնաժամերի հնարավոր խորացումները, բացասական դրսևորումները, կորուստները շոշափելի կլինեն: Այդ առումով, իրավիճակների ահագնացող վտանգը անհրաժեշտություն է առաջացնում ստեղծելու ՀՀ սնանկության ինստիտուտի զարգացման նոր նախադրյալներ, որը կհանգեցնի իրավաքաղաքական, տնտեսական դաշտի և ֆինանսական կայունության ամրապնդմանը, ինչպես նաև սնանկացման կանխարգելման նոր մոտեցումների մշակմանը:

Այս համատեքստում ՀՀ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) անվճարունակության կանխարգելմանն ուղղված միջոցառումները պետք է դիտվեն որպես առանցքային տնտեսական հիմնախնդիր: Կազմակերպությունների սնանկացման կանխարգելման հիմնահարցի ուսումնասիրությունը պահանջում է նախևառաջ համապարփակ և բազմակողմանի վերլուծություն, որը վերաբերում է բանկերին, վարկային կազմակերպություններին, ներդրումային և ապահովագրական ընկերություններին, հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին և այլն: Պետք է փաստել, որ շահույթ ստանալու նպատակ հետապնդող բոլոր կազմակերպությունները կարող են կանգնել սնանկացման վտանգի առաջ, իսկ նմանատիպ կազմակերպությունների սնանկության հիմնախնդիրը պայմանավորված է հիմնականում ժամկետանց պարտավորություններով: ՀՀ արտաքին պետական պարտքը, որը օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ՀՀ կառավարությանը տրամադրվող վարկերն են[1], 2016 թ. վերջի դրությամբ կազմել է 2 325. 616 մլրդ դրամ[2]: Այս ֆոնին ՀՀ կազմակերպությունների պարտավորությունները 3 095 807.1 մլն դրամ են[3], որը արտաքին պետական պարտքի 133.1 %-ն է կազմում:

Ինչպես նշված է աղյուսակ 1-ում, այդ պարտավորություններից 801 346.5 մլն դրամը կրեդիտորական պարտքերն են, իսկ 2 294 460.5 մլն դրամը՝ ստացված վարկերի և փոխառությունների դիմաց պարտքերը[4]:

Աղյուսակ 1

ՀՀ կազմակերպությունների պարտավորությունները և ժամկետանց պարտքերը 2016 թ. վերջի դրությամբ (մլն ՀՀ դրամ)

Ընդամենը	*3 095 807.1*
Ստացած վարկերի և փոխառությունների դիմաց պարտքեր	2 294 460.5
Կրեդիտորական պարտքեր	**801 346.5**
Դեբիտորական պարտքեր	872 844.6
Կրեդիտորական պարտքերի՝ դեբիտորականներին գերազանցումը	-71 498.1
ժամկետանց կրեդիտորական պարտքերի՝ ժամկետանց դեբիտորականներին գերազանցումը	-18 311.1

[1] Համաձայն 2015 թ. հուլիսի 14-ին ընդունված «Պետական պարտքի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» հոդված 1-ի՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքն այլևս չի ներառվում ՀՀ արտաքին պետական պարտքի կազմում. http://www.arlis.am

[2] Տվյալների համար հիմք է ՀՀ վիճակագրական տարեգիրք 2017-ը, էջ 395:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 400:

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 400, 403:

Հաջորդիվ գծապատկերում ներկայացված է կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի դինամիկան՝ ըստ ոլորտների, որտեղից երևում է, որ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, առևտրի և մշակող արդյունաբերության ոլորտներում **կրեդիտորական պարտքերը** մեծ ծավալներ են զբաղեցնում:



Գծապատկեր 1. *ՀՀ կազմակերպությունների կրեդիտորական պարտքերը 2016 թ. վերջի դրությամբ (մլն ՀՀ դրամ)*[5]

Պետք է նշել, որ ՀՀ ընդհանուր միջբանկային վարկերը 2018 թ. հունվարին կազմել են 94 912 մլն ՀՀ դրամ, որը 2017 թ. դեկտեմբերի դրությամբ աճել է 5 288 մլն ՀՀ դրամով[6], իսկ ՀՀ առևտրային բանկերի չաշխատող ակտիվների[7] տեսակարար կշիռը բանկերի ընդհանուր ակտիվների մեջ 2017 թ. դեկտեմբերի և 2018 թ. հունվարի դրությամբ կազմել է 4.99%[8]:

Սնանկացման տնտեսահիրավական կարգավորումը պահանջում է առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի **տեսակարար կշիռների** վերաբերյալ բովանդակային մոտեցում, ինչպես նաև ՀՀ կազմակերպությունների կրեդիտորական և դեբիտորական պարտքերի համապարփակ վերլուծություն:

Գծապատկեր 2-ում նկարագրված է առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի շարժընթացը 2017 թ. և 2018 թ. հունվարի 31-ի դրությամբ, ըստ որի՝ վարկերի ամենամեծ ծավալները տրամադրվել են ձեռնարկություններին. 2017 թ. կազմել են 1 409 551 մլն ՀՀ դրամ, իսկ 31.01.2018 թ. դրությամբ՝ 1 393 062 մլն ՀՀ դրամ:

---

[5] Տե՛ս նույն տեղը:
[6] Տե՛ս ՀՀ ԿԲ տեղեկագիր 2018, էջ 122. www.cba.am/am/SitePages/pperiodicals.aspx?Category:
[7] Չաշխատող են համարվում այն ակտիվները, որոնց համար պայմանագրով սահմանված չեն մարման նախապես որոշված ժամկետներ:
[8] Տե՛ս ՀՀ ԿԲ տեղեկագիր 2018, էջ 122.www.cba.am/am/SitePages/pperiodicals.aspx?Category:



Գծապատկեր 2. *Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերն ըստ տնտեսության ոլորտների 31.01.2018 թ. դրությամբ (մլն ՀՀ դրամ)*[10]

Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային փաթեթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ըստ տնտեսության ոլորտների, վարկերի մեծ մասը տրամադրվել է տնային տնտեսություններին. 2017 թ. կազմել են 157 548 մլն ՀՀ դրամ, իսկ 2018 թ. հունվարի 31-ի դրությամբ՝ 160 594 մլն ՀՀ դրամ (85%)[11]:



Գծապատկեր 3. *Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն՝ ըստ տնտեսության ոլորտների 31.01.2018 թ. դրությամբ (մլն ՀՀ դրամ)*[12]

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ կազմակերպությունների վարկային պարտավորությունները, առևտրային բանկերի և վարկային կազմակերպու-

[10] Տվյալների համար հիմք է ՀՀ ԿԲ տեղեկագիր 2018-ը, էջ 117. www.cba.am/am/SitePages /pperiodicals.aspx?Category:
[11] Տե՛ս նույն տեղը, էջ 123:
[12] Տվյալների համար հիմք է ՀՀ ԿԲ տեղեկագիր 2018-ը. www.cba.am/am/SitePages/pperiodicals.aspx?Category:

թյունների վարկային փաթեթի վիճակագրական տեղեկատվության համաձայն, տնտեսության խոցելի ոլորտներն են համարվում սպառողական և հիպոթեքային վարկերը, առևտրի ոլորտն ու ֆինանսական հատվածը, որոնց տրամադրվել են վարկերի ամենամեծ ծավալները:

Հարկ է նշել, որ երկրի սոցիալ-տնտեսական զարգացումները պայմանավորված են մի շարք գործոններով, և կազմակերպությունների սնանկացման կանխարգելման հիմնախնդրի շուրջ քննարկումների համատեքստում պետք է շեշտել, որ այստեղ կարևոր գործոններից մեկը պարտավորությունների ժամանակին վճարումն է: Եթե պետությունը կարողանում է պարտավորությունների մարման արագ և արդյունավետ մեխանիզմներ կիրառել, ապա իր գործունեությամբ նա խթանում է կազմակերպությունների արդյունավետ աշխատանքը: Որպես արդյունք՝ նվազում են վարկային տոկոսադրույքները, ապահովվում են ապառիկ գործարքների մեծ ծավալներ: Երբ սնանկացման գործընթացները երկարաձգվում են, դատարանը ուշացումով է որոշում ընդունում, վարկային կազմակերպություններն ու առևտրային բանկերը արագ տեմպով բարձրացնում են վարկային տոկոսադրույքները, առանց գրավի չեն կնքում վարկային պայմանագրեր կամ որպես գրավ ընդունում են մեծ արժեք ունեցող գույք, որի պատճառով տնտեսավարող սուբյեկտները ֆորսմաժորային իրավիճակից դուրս գալու համար սկսում են գործարքներ կնքել արտասահմանյան կազմակերպությունների հետ: Փաստորեն, խաթարվում է տնտեսության զարգացումը. արդյունքում ունենում ենք ակտիվների սառեցում և մենաշնորհի ձևավորում, տուժում է նաև պարտատերը, սնանկ ճանաչված պարտապանը, նվազում է ներդրողների վստահությունը: Սնանկության ընթացակարգերը թույլ են տալիս սնանկ կազմակերպության լիկվիդացիոն գույքի միջոցով պետության միջամտությամբ ստեղծել նոր և արդյունավետ գործող կազմակերպություն: Իսկ ինչպես հայտնի է, առողջացման ծրագիրը ենթադրում է «հիվանդ» կազմակերպությունների ախտորոշում, առողջացում, հետևաբար՝ կազմակերպության սնանկության կանխարգելման ձևերից մեկը կլինի «հիվանդ» կազմակերպության գույքի փոխանցում «առողջ» կազմակերպությանը: Լինելով ՀՀ դատական համակարգի նոր զարգացող ինստիտուտ՝ սնանկության ինստիտուտի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում մեկ նպատակ էր հետապնդում՝ պարտապանի գույքի իրացում պահանջատերերի պահանջները բավարարելու և իրավունքները վերականգնելու նպատակով: Այնուհետև, զարգացման մի քանի փուլեր ապրելով, սնանկության ինստիտուտը իր առջև դրեց մեկ այլ ողջամիտ նպատակ. այն է՝ ոչ թե լուծարել կազմակերպությունը և նրա գույքի վաճառքի միջոցով բավարարել պահանջատերերի պահանջները, այլ առողջացման ծրագրի միջոցով օգնել կազմակերպությանը՝ շարունակելու իր գործունեությունը՝ պահպանելով նաև աշխատատեղերը: Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ տնտեսությունում սնանկացման գործընթացը կարող է վերացնել, ոչնչացնել շուկայում «հիվանդ» կազմակերպություններին և հնարավորություն տալ արդյունավետ գործող սուբյեկտներին կառուցելու իրենց բիզնեսը: Այսպիսով՝ անվճարունակության օրենսդրական հիմնական նպատակադրումը բիզնեսի պահպանումն է և ակտիվների սառեցման կանխումը: Բացի այդ, կարգավորումներն ուղղվում են պայմանների ստեղծմանն այն հաշվով, որ կազմակերպությունները կարողանան ֆինանսական ճգնաժամի պայմաններում ինքնուրույն պայքարել ֆինանսական

անկայունության դեմ կամ ժամանակին հեռանալ բիզնեսից: Անվճարունակության մասին օրենսդրությունը պարունակում է նաև սեփականության պաշտպանության տարրեր, քանի որ շուկայական տնտեսությունում գլխավորը սեփականության իրավունքն է:

Հարկային տվյալների համաձայն՝ 2016 թ. սնանկության գործով դատարան ներկայացրած դիմումների քանակը եղել է 2426, իսկ ներկայացված դիմումներով պարտավորությունների չափը՝ 26 651 365 800 ՀՀ դրամ, որից միայն 1 291 478 000 ՀՀ դրամն է մուտք եղել: 2017 թ. դիմումների քանակը եղել է 665, պարտավորությունների չափը՝ 10 059 185 500 ՀՀ դրամ, որից մուտք է եղել 2 973 522 000 ՀՀ դրամ[13]: Ըստ վերոնշյալ տվյալների՝ վերջին տարիներին սնանկության գործերով դիմումների քանակը նվազել է, բայց արդյոք սա վկայում է երկրի տնտեսական զարգացման և կազմակերպությունների գործունեության առաջխաղացման մասին, թե կազմակերպությունների սնանկության մասին դիմումները պարզապես չեն ներկայացվել դատարան:

Նախ պետք է փաստել, որ դատարան ներկայացրած սնանկության գործերով դիմումների քանակի վիճակագրական բաց տվյալներ դեռևս գոյություն չունեն: Իսկ ինչ վերաբերում է տեղեկատվությանը, ապա հարկ է նշել, որ սնանկության գործընթացն ավելի դյուրին և թափանցիկ անցկացնելու համար օրենքով նախատեսվել է պարտատիրոջը, ֆինանսական առողջացման ծրագրին մասնակցող ֆինանսավորողներին տրամադրել տեղեկություններ պարտապանի սնանկության վարույթի կամ ֆինանսական առողջացման վերաբերյալ: Սնանկության գործերը քննող դատարանների հետ միասին անհրաժեշտ է ստեղծել մի համակարգ, որտեղ, ըստ յուրաքանչյուր ժամանակաշրջանի, ընդգրկված կլինեն սնանկության/անվճարունակության գործերով դիմումների քանակը, արդեն սնանկացված կազմակերպությունների թիվը և ներկայացված դիմումներով պարտավորությունների չափը: Համակարգը հնարավորություն կտա առանց այդ էլ խրթին դաշտը առավել մատչելի և հասանելի դարձնել:

Իրավաբանական անձանց պարագայում հանդիպում են դեպքեր, երբ բանկերում փակված հաշիվների և տնտեսական գործունեությունը դադարեցնելու պարագայում նրանք դեռևս պաշտոնապես գործում են որպես կազմակերպություններ: Այն դեպքում, երբ տվյալ կազմակերպության սնանկության գործերով դիմումը, որտեղ երևում է գույքի բացակայությունը, արդեն ներկայացվել է դատարան, անհրաժեշտ է համակարգում կիրառել այն մոտեցումը, որ դատարանն առանց համապատասխան ընթացակարգի չլուծարի իրավաբանական անձին: Անհրաժեշտ ենք համարում նաև սնանկության մասին օրենքում ավելացնել պարտատերերի անվճարունակության վերաբերյալ դրույթներ, ինչպես օրինակ՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և այլն: Սա հնարավորություն կտա պարտապաններին օրենքով սահմանված կարգով ավելի սեղմ ժամկետներում գալու ֆինանսական առողջացման, այսինքն՝ կշահի սնանկության ողջ գործընթացի արդյունավետությունը:

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորված է տարբեր ինստիտուտների արդյունավետ գործունեությամբ, սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակմամբ և դրանց իրագործմամբ: Եթե հաշվի առնենք

[13] Տե՛ս http://www.petekamutner.am/DefaultTs.aspx?sid=ts

այն հանգամանքը, որ տնտեսական զարգացումը ենթադրում է ֆինանսական ռեսուրսների հավաքագրում և արդյունավետ բաշխում, ապա այստեղ ուղիղ կապ ենք տեսնում կազմակերպությունների սնանկացման կանխարգելման և երկրի տնտեսական զարգացման միջև, քանի որ յուրաքանչյուր կազմակերպության տնտեսական վիճակը երկրի առողջ տնտեսության գրավականն է: Սահմանադրականության գլխավոր խնդիրը սահմանադրական նորմերի լիիրավ կատարումն է և ինստիտուտների արդյունավետ գործառնումը: Սահմանադրության մեջ ամրագրված յուրաքանչյուր նորմ բխում է պետության իրավունքի շահերից, իսկ սահմանադրականությունը պահանջում է գործող ինստիտուտների նպատակային ուղղվածություն դեպի տնտեսական ակտիվություն, այսինքն՝ բացառում ենք ինստիտուտների թերզարգացման պայմաններում աշխատանք: Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը՝ «Երկրի իրավական անվտանգության թիվ 1 ներքին սպառնալիքը սահմանադրականության դեֆիցիտն է[14]»: Հետևաբար՝ պետական ինստիտուտների յուրաքանչյուր գործողություն պետք է ուղղված լինի այդ պակասուրդի հաղթահարմանը: Սահմանադրականության տիրույթում սահմանադրական նորմերի առկայությունից և դրանց գործադրումից զատ, պակաս կարևոր չէ կառավարումը, որը, ինչպես գիտենք, կազմակերպությունների սնանկացման կանխարգելման և հետագա գործընթացների համար ևս առանցքային է:

Կազմակերպությունների սնանկացման կանխարգելման գործընթացը պահանջում է իրավական և տնտեսական կարգավորումների մեխանիզմների կիրառում, և քանի որ սահմանադրականության մակարդակի որոշման հիմքում առկա է 3 գործոն՝ իրավական, ժողովրդավարական և սոցիալ-տնտեսական[15], ապա պետք է փաստել, որ տնտեսության զարգացման և կազմակերպությունների տնտեսապես ակտիվ գործունեությունը սահմանադրականության բարձր մակարդակի և պետության կայուն զարգացման երաշխիքն է:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ վիճակագրական տարեգիրք 2017. http://www.armstat.am/file/doc/99504418.pdf
2. ՀՀ ԿԲ տեղեկագիր, 2018. www.cba.am/am/SitePages/pperiodicals.aspx?Category.
3. http://www.petekamutner.am/DefaultTs.aspx?sid=ts.10.05.2018:
4. Հարությունյան Գ., Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական. http://constculture.org/publications.htm.
5. Саргсян Г., Геворгян Р., Кочинян Н., Конституционная диагностика и мониторинг: инструментарий и методы реализации, "Конституционное правосудие", 4(74), 2016.

[14] **Գ. Հարությունյան,** Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական. http://constculture.org/publications.htm.

[15] Տե՛ս **Саргсян Г., Геворгян Р., Кочинян Н.,** Конституционная диагностика и мониторинг: инструментарий и методы реализации, "Конституционное правосудие", 4(74), 2016, էջ 56-75:

ВАРСЕНИК САРГСЯН
Аспирант кафедры менеджмента и бизнеса ЕГУ

Экономико-правовое регулирование банкротства коммерческих организаций РА в контексте конституционализма. – Процесс предотвращения банкротства является ключевым критерием состоятельности судебной системы Армении и деятельности экономических институтов. Изучив объем обязательств и просроченной задолженности организаций, возникает необходимость разработки новых подходов для предотвращения банкротства организаций РА в контексте конституционализма. Рассматривается проблема внешнего долга Армении и неплатежеспособности организаций РА и в этом свете процесс их дальнейшего банкротства.

Ключевые слова: *обязанности организаций, просроченная задолженность, Судебная система Республики Армения, конституционализм, юридическая защита.*
JEL: K0, K00, K35

VARSENIK SARGSYAN
Post-graduate at the Chair of Management and Business at YSU

Economic and Legal Regulation of Bankruptcy of the RA Commercial Organizations in the Context of Constitutionalism. – The process of bankruptcy prevention occupies the most important place in the judicial system the Republic of Armenia and the activities of obligations of economic institutions. Studying the volumes of overdue debts of organizations it's necessary to develop new approaches to prevening bankruptcy of the RA organizations in the context of constitutionalism. The problematic effect of the external debt of Armenia and the obligations of the RA organizations concerning the insolvency of the organizations, as well as the bankruptcy process in the future are also presented in the given paper.

Key words: *responsibilities of organizations, overdue debt, the judicial system of the Republic of Armenia, constitutionalism, legal security.*
JEL: K0, K00, K35